# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԷՅ-ԹԻ-ՓԻ» բարեգործական հիմնադրամի կողմից Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մեծ Սարիար բնակավայրի վարչական տարածքում 100 հա անտառապատման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսման

**Մեծ Սարիար** **24.07.2026 թ.**

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (21.06.2014 թ. ՀՕ-110-Ն, խմբագրված 2023 թ.) և ՀՀ կառավարության 19.11.2014 թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի (որոշումը խմբագրվել է 28.12.2023 թիվ 2343-Ն որոշում)՝ 2026 թվականի հուլիսի 24-ին, ժամը 11:00-ին Մեծ Սարիար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Ախուրյան համայնքի Մեծ Սարիար բնակավայրի վարչական տարածքում 100 հա անտառապատման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային երկրորդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ ՇՄՆ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետը և նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով, նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունության տեսակ, ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, կազմել է բնապահպանական կառավարման պլան և մշտադիտարկումների ծրագիր, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Նշեց նաև, որ օրենքով սահմանված կարգով իրականացվել է ծանուցում, որը հրապարակվել է «Ազդարար.ամ» կայքում, ինչպես նաև ծանուցումն ուղարկվել է համայնքին՝ բնակչության և շահագրգիռ հանրության շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով: Ներկաներին տեղեկացվեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Ընկերության ներկայացուցիչը մանրամասն ներկայացրեց ՇՄԱԳ հաշվետվությունում ներառված շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության շրջանակները, դրանց բացառման կամ գոնե նվազագույնի հասցման բոլոր ՀՀ-ում գործող օրենսդրությամբ սահմանված միջոցառումները: Բացի դրանից, ներկայացրեց նաև մշտադիտարկումների ծրագիրը և դրա նպատակը, համայնքի համար նախատեսվող սոցիալական ծրագրերը: Նշվեց, որ ծրագիրը ավելի շատ բնապահպանական ուղղվածություն ունի, քանի որ իրականացվելու է 100 հա անտառտնկում:

Լսման ընթացքում ներկայացվեց ԿԳՄՍՆ կարծիքը, որի համաձայն անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ, ինչին ի պատասխան նախաձեռնողները նշեցին, որ ծառերի տնկումն իրենից չի ներկայացնում լայնամասշտաբ հողային աշխատանքներ, հետևաբար, ազդեցությունը չնչին է: Բացի այդ, աշխատանքի ընթացքում առաջնորդվելու են պատահական գտածոների ընթացակարգով՝ որևէ մշակութային շերտի հայտնաբերման դեպքում տեղյակ պահելով լիազոր մարմնին:

Բնակիչները նշեցին, որ իրենք կողմ են նախատեսվող գործունեությանը, քանի որ նախ կունենան աշխատանք, երկրորդն էլ շատ լավ գործ է անտառ հիմնելը և խնդրեցին ինչքան հնարավոր է շուտ սկսվեն աշխատանքները: Հանրային լսումն անցավ արդյունավետ քննարկման մթնոլորտում, ներկաները ողջունեցին նախատեսվող գործունեությունը:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր բնակավայրի ղեկավարը, գյուղապետարանի աշխատակիցներ, բնակիչներ, ընկերության ներկայացուցիչներ:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

Լսման պատասխանատու՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Ք. Հարությունյան

«ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ.Մկրտչյան